



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3405

ՀԵՐՏԵՄԻՏ

ԱՇԽԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ԳՐԵՑ

ԳԻՆԻՄԻԳ Խ. ՇԻՐԻՆԻՔԻՆ

U.S. 3405



Կ. ՊՈԼԻՍ

ՅՊԱԳՐՈՒԹՅԱՆ Գ. ՀԵՂԵՆՅԱՆ

1872



Համոզ
Եղբարս Գրադպրարձար՝ ան ԱՄ. Ե.
Զայանքան հաս ի Վանքապոլսոյ,
հար Վանքոյ:

1906 Զանգարուտ

ՏՊԱԳՐ. Պ. ՃԻԶՎԵՃԵԱՆ
Կ.—ՊՕԼԻՍ ԵՌԻՍՏՈՒՅԵԱՆ ԽԱՆ ԹԻԻ Ծ

ՄԵՍ. ՄԿՐՏԻՉ ԷՖԵՆՏԻ ՄԵԼԻՔԵԱՆ

Ա.ՉՆԻԻ ԲԱՐԵԿԱՄՍ

Սոյն փոքրիկ երկասիրութիւնը, մեր «Աղքատութիւն և իւր դարմաններն ՚ի Պիւղօրէս» անուն գործէն հաղիւ քանի մ' օր նախընթաց է: Անցեալ տարի ՚ի Կ. Պօլիս գտնուելով առիթ ունեցայ զայն մամլոյ յանձնելու, իսկ սա թէև անդրանիկ՝ տպագրութեան յանձնուելու բաղդը չունեցաւ յայնժամ, նման այն երէց եղբարց և քերց, որք նախ իրենց կրտսերներուն հարսանիքը կը տեսնեն:

Ինչպէս զիտէք, այս անկարգութեան պատճառն գլխաւորապէս երկու է. ներքին կամ արտաքին տգեղութիւն, և անյարմար պարագաներ, որք մարդոց գործերը իրենց հաշիւէն տարբեր կերպով կը տրամադրեն: Մեր սոյն գործին ալ լոյս տեսնելու բաղդին ցարդ յապաղումը անյարմար պարագաներէ յառաջ եկած է, որոյ վրայ աստանօր խօսիլն աւելորդ և անպատեհ կը համարիմ: Իսկ գալով տգեղութեան պատճառին, ատոր վճիռն ուշիմ ընթերցողաց դատողութեանը կը թողում, զի այդպիսի վճիռ մի նոցա միայն անկ է տալ:

Աղնիւ բարեկամս , այժմ կը խնդրէք յինէն որ Ձեզ յանձնեմ զայս փանաքի երկասիրութիւնս , Կ. Պօլիս տանելու և զայն միջոցաւ մ'ի ըյս ընծայելու համար : Գիտեմ թէ Ձեր առիւտնեցած անկեղծ մտերմութեան սէրէն չէ , որ յայս կը շարժիք . այլ , թէև տկար , բայց բարի եռանդով մի գրուած երկտողեայ աշխատասիրութիւն մի փոյիներու մէջ չիատեցնելու և հեղինակը քաջալերելու անմահ սկզբունքէն : Կը հաւանիմ Ձեր խնդրոյն . Ձեր այս քաջալերին փոխարէն իմ խորին շնորհակալութիւնս յայտնելով , և այս մասին իմ զգացումներս առանց այլոց առջև բացատրելու , սրտովս հանդերձ Ձեր մտերմութեան յանձնելով :

1872 Հոկտ. 1

ՊԱՂՁԷՃԻԿ

Մնամ անձնուէր

Բարեկամդ

Գ. Մ. Շ.

ՄԱՐԵԼԻ ԲՆԹԵՐՅՈՂՔ

Սոյն գործին գլուխն յառաջաբան գրելու հարկ չկայ . զի Ձեզ ընթերցողացդ արդէն յայտնի է թէ երկու , երեք և այլն անձանց մէջ ինչ ինչ խնդրոց վրայ գրաւորապէս ձևացեալ խօսակցութիւնը կը կոչուի « Տրամախօսութիւն » : Սակայն աստանօր երկու խօսք միայն ասել արժան կը համարիմք :

Լուսաւոր գաղափարներն ու ճշմարտութիւններն ժողովրդեան մէջ ընդհանուր կերպով տարածելու միջոցներէն մին ալ դանձոք յաճախ , բայց տարբեր ոճով կրկնելն է : Այսու համոզմամբ է որ թէ տեղական և թէ ուրիշ դաւառական ազգայնոց ամենամեծ մասին՝ շատ կարևոր և կենսական խնդրոց վրայ մութ գաղափարներ ունենալն , և որով դարուս յառաջադիմական ոգւոյն հակառակ վարուիլն տեսնելով՝ պարտք համարեցանք ըստ կարգի և ըստ սահմանի գործոյս փոքր ինչ լուսաբանել Տրամախօսութեան ձևով : Թո՛ղ ներուի մեզ յաւելուլ թէ նոյնհետայն ազգային , բարոյական , կրօնական , կրթական և տնտեսական ինչ ինչ խնդրոց վրայ ևս կարճ 'ի կարճոյ խօսուած լինելով՝ ամեն տեղացի Ազգայնոց սոյնին ընթերցման նուիրած ժամանակն յուսամք թէ կորուսեալ չլիտի համարուի : Քանզի գործ մի որչափ ալ փոքր լինի , կարծեմ դարձեալ կառերորութիւն մի կրնայ ունենալ , երբ բարի նպատակաւ մի գրուած է : Գրականութեան որ և է ճիւղեր , մեծ կամ փոքր , կը նմանին այն մեծ և փոքրիկ վտակաց , որք զանազան աղբիւրներէ հոսելով և մեծամեծ զետեղ կազմելով ջրերու Ովկիանոսը կը լնուն : Մեր սոյն երկն ալ որ այն ճիւղերուն ամենէն փոքրիկն է , ահա իբրև առուակ մի կը գոյ ընդ

մեծամեծս խառնեալ՝ Հայկական գրականութեան թերա-
լից Ափիանոսին մէջ թափուելու և բնական է մեզ յուսալ
թէ այս առուակն իր փոքրիութեանն համար չպիտի արհա-
մարհուի, բաւական է որ վճիտ լինին իր ջուրերը, այլ նե-
բողամտութեամբ պիտի ընդունուի յանուն ընթերցասիրու-
թեան և յանուն քաջալերութեան ազգային դաստիարակու-
թեան նուիրեալ անձի մը, որ անկեղծաբար փափաքած է
այս նամբով ևս ազգային մտաւոր զարգացմանը ծառայել ։

12 Յունիս 1872

Գ. Մ. ՉԻՐԻՆՅԱՆ

ՊԱՂՁԻՃԻԿ



1

ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏՔ

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻԻՆ

ՍՄՐՏԻՆ ԵՒ ՍԱՀՆԿԻՆ ՄԷՋ

(Սմբատ Գ. Կարգի աշակերտ
և Սահակ Գ. Կարգի) :

ՍՍ.Ն. Պարոն Սմբատ, ալ բաւ է աշխատու
թիւննիդ, միայն երկուքս մնացինք այս սրահին
մէջ. ամեն մարդ ուտելու, զբօսելու կամ մարմն
նամարզութիւն ընելու դնաց. պէտք է որ մենք ալ
երթանք նոյնը ընելու, ըստ որում մտաւորապէս
և մարմնաւորապէս հանդչելու և զօրութիւն առ
նելու պէտք ունիմք :

ՍՄԲ. Իրաւունք ունիք, բարեկամս, սակայն
եթէ կը հաճիք, քիչ մը նստէք, որպէս զի ես ալ
ձեզի պէս պարտքերս կատարելէն վերջը ճաշի
և զբօսանքի դնացած լինիմ, մանաւանդ որ մեր

դասատուն պատուիրած է պարտքերս ժամանակին կատարած գտնուելու :

ՍՍ.Ն. Այդ պատուէրը դասատուն մեր կարգին ալ ըրած է , և ես դեռ կատարած չեմ ամբողջապէս . բայց ներսի դիէս մղում մը կ'ըզամ այդ պակասը վերջը կատարելու պայմանաւ այժմ դրօսանքի երթալ :

ՍՄԲ. Կերևի թէ կամ սաստիկ անօթի էք , և կամ սրտնեղութիւն մ'ունիք այսօր :

ՍՍ.Ն. Այդ երկուքն ալ ունիմ . բայց անօթութեանս խօսք կրնամ հասկցնել քանի մը վայրկեան մանաւանդ ձեր սիրոյն համար , եթէ սըրտնեղութիւնս եղջիւր ամբարձած չլինի ներսի դիս :

ՍՄԲ. Ծնորհակալ եմ որ իմ սիրոյս համար քանի մը վայրկեան սպասելու տրամադիր էք . սակայն կը ներէ՞ք ինձ հարցնել ձեզ թէ ի՞նչ է ձեր սրտնեղութեան պատճառը :

ՍՍ.Ն. Հիմայ ժամանակը չէ . և դեռ դատաստան ըրած չեմ սրտնեղութեանս պատճառին վրայ : Զգեցէք այժմ (կաղամարը առնելով) :

ՍՄԲ. Ներեցէ՞ք , բարեկամս , պէտք է որ ժամանակին պարտքերս կատարած լինիմ :

ՍՍ.Ն. Փիլիսոփայ պիտի ըլլաս . աշխարհիս վերջին վայրկեանը չէ , ուրիշ ատեն կրնաս կատարել այդ պարտքը :

ՍՄԲ. Բոլորովին հակառակ տրամադրութիւն՝

ներու մէջ կը տեսնեմ զձեզ այսօր . տրամադրութիւններ՝ որք ձեզի պատիւ չեն բերեր և արժէքնիդ չափազանց կը նուազեցնեն . — Փիլիսոփայ պիտի ըլլամ , աշխարհիս վերջին վայրկեանը չէ , ուրիշ ատեն կրնաս կատարել այդ պարտքը : — Կը ներէք , բարեկամս , այդ խօսքերը ձեր բերնին մէջ չվայելեցուցի . ուսմիկներն այդպէս կը դատեն եթէ դատաստան կրնայ ըսուել անոնց այդպէս խօսելուն :

ՍՍ.Ն. Բէ՛հ . չես գիտեր . աշխարհիս երջանիկները Փիլիսոփաներն են , անոնք որ զիչեր ցորեկ մտածելով զլուխնին կ'ուռեցնեն , աչքերնուն լոյսը կը թափեն , կեանքերնին զրիչ գործածութեան մէջ կը մաշեն . սա՛ չէ՞ վիճակնին . ո՞ր Փիլիսոփայ , ո՞ր գրագէտ և ո՞ր վարժապետ խեղճութեան մէջ չէ անցուցեր իր կեանքը : Լամար , թինէն աւելի մեծ Փիլիսոփայ և պատմաբան — բանաստեղծ , ո՞չ ապաքէն բարոյական աշխարհի այն արևն ալ լուսաւոր ազգի մը մէջ իր վերջին օրերը կարօտութեամբ անցոյց . և ի՞նչ պէտք է հեռուն երթալ , մեր ուսումնականներն ու վարժապետները կենդանի օրինակ չե՞ն ըսածիս (քովը կը նստի) :

ՍՄԲ. Յիրաւի , Պարոն Սահակ , գաղափարը ահագին իրփոխութիւն մը կը նշմարեմ վրադ ի՞նչ ըրեր աշխատասիրութեան և ուսումնասիրութեան սկզբունքներդ՝ շորս գործով մեզ ալ կը

քարոզելի, այն սկզբունքները՝ որք աշխարհիս նիւթական և բարոյական յառաջադիմութեանց մեծ գործը արտադրած են և կ'արտադրեն :

ՍՍ. Հրաժարիլ կ'ուզեմ այն սկզբունքներէն, որովհետեւ դեռ իմ դժբաղդութիւնս չ'ամոքեցին :

ՍՄԲ. Բայց դու դեռ գործին սկիզբն ես . դժբաղդութեանդ ամոքումը գործին մէջ տեղը կամ վերջը պիտի գտնես, և ասոր համար ալ համբերութեան և յարատեւութեան քաջութիւնը պէտք է ունենալ : Ասկէ զատ պէտք է զխոնար որ՝ այսօր եռանդով օգտակար բանի մը ձեռք զարնել, և վաղը առանց բանաւոր պատճառի մը անոր վրայ տարբեր աչօք նայիլ, և արհամարհել, սկզբունք չէ, յարատեւութեան պակասութիւն կենթադրէ . յարատեւութեան՝ առանց որոյ անհնար է յառաջադիմել որ և իցէ ձեռնարկի մէջ :

ՍՍ. Միջոցի պակասութիւնը սկզբունք և յարատեւութիւն տակն ու վրայ կ'ընէ :

ՍՄԲ. Սկզբունքը միշտ սկզբունք է, այսինքն թէ իրօք հաստատուած է յաւիտենական ճշմարտութեան մը վրայ, անվորիորս է նա . միայն թէ միջոցի պակասութեան ժամանակ գործելէ առ ժամս կը դադրի :

ՍՍ. Ես ալ մինչև միջոցը գտնեմ, պիտի բաղարիմ դպրոցէն :

ՍՄԲ. Նախ որ դպրոցէն դադարիլն աղէկ չէ .

դի ուսմունք սորվելու ամենէն յարմար ժամանակը պատանեկութիւնն է, չէ՞ք տեսներ երիտասարդներն ու այրերը, կամ այսպէս ըսենք, տանուտէր եղողները հողերէ և զբաղումներէ շրջապատեալ անհնարին դժուարութիւն ունին ուսմունք սովորելու : Եւ երկրորդ՝ քանի որ այսօր դպրոցն էք, պէտք չէր որ վայրկեան մը կորսնցնէիք, ձեր այսօրուան շահը այն պիտի լինէր, մանաւանդ որ պարտքերնիդ ալ չէք կատարած : Մոռցա՞ք արդեօք մեր գասատուին անցեալ օր երկրորդ կարգի դասերը անպատրաստ գտած ատեն ըիչ մը բարկութեամբ բայց իրաւամբ ըսած խօսքերը : « Բարեկամք, ըսաւ նա, կամ աշխատելու էք կամ դպրոցէն հրաժարելու . լաւագոյն է դպրոցէն հրաժարել քան թէ իր ժամանակը դպրոցին մէջ կորսնցնել : Հայրերնիդ զձեզ դպրոց կը զրկեն ուսմունք սովորելու և բարի մարդ ըլլալու համար . և մենք նոյն նպատակաւ հոս շունչ կ'սպառենք և քրտինք կը թափենք, բայց դուք ժամանակնիդ կորսնցնելով մեր աշխատութիւնը անպտուղ կ'ընէք և ձեր ապագան կ'սպաննէք : Բայց պէտք է զխոնար որ ժամանակը սպաննելը բարոյական անձնասպանութեան ամենէն մեծն է : Աստուած ժամանակը մարդուս տուած է՝ զայն յօգուտ անձին և ընկերին գործածելու համար . հետեւապէս ժամակորոյս մարդը ապրելու չէ : Ամէն փաստուցէ դարմանուի, բայց ժամանակի կորուստը

որ մարդուս ունեցած բարեաց ամենէն մեծն և ան-
 կշիռն է, անդարմանելի է ևն. » : Դուք որ յաճախ
 այս խօսքերը կը յեղյեղէիք, և ասոնց համեմատ
 կը խօսէիք, կը շարժէիք և կը գործէիք, ինչէ՞ն է
 որ այսօր փոխուած էք. եթէ յիրաւի սկզբունքնիդ
 փոխած էք, պէտք է որ անուննիդ ալ փոխէք.
 զի այդ անունը կրողը գործով ալ արժանի ըլլա-
 լու է նոյնին : Չէ՞ք յիշէր որ այդ անունը կրողը,
 (Ս. Սահակ Պարթև) հայոց մէջ ամենէն նշանա-
 ւոր մարդերէն մէկը եղաւ : Նա մայրենի լեզուէն
 զատ Պարսկերէնն ու Ասորերէնը գիտէր, բայց
 Յունարէն լեզուն քաջ սորվելու և Աստուածա-
 շունչը ՚ի Հայ լեզու թարգմանելու, Եկեղեցին
 բարեկարգելու և ազգային գրականութիւնը
 ծաղկեցնելու համար, երկար ճամբորդութիւններ
 ըրաւ, երկար պանդխտութիւններ կրեց ՚ի Անտա-
 ղիա, ՚ի Կ. Պօլիս և յԱղեքսանդրիա, և յետ բա-
 զում տքնութեանց և ճգանց, իբրև ժրալան մե-
 ղու առ օտարս քաղած ծաղկանց հիւթերը ընդ-
 իւր բերելով ՚ի Հայս, ալակցութեամբ իր մեծ
 ընկերին Ս. Մեսրոպայ և ձաղերուն՝ Մովսէսի,
 Եղնիկի, Կորիւնի, Դաւթի, Եղիշէի և այլոց,
 Աստուածային պատուիրանաց և իմացական լու-
 սոյ ամենաքաղցր մեղրովը լեցոյց հայկազանց
 լեզուին փեթակը : Դուք, այդ Սրբազան և ան-
 մահ անձին անուանակից, ի՞նչպէս կը համարձա-
 կիք յետադէմ գաղափարներ յայտնելու, և ձեր

գ. ժբադղութեանը մէջ մեր ուսումնականաց դրժ-
 բազդ վիճակը ծաղրել, այն ալ մեր գտնուած
 օրերուն մէջ, ուր ուսմանց և դիտութեանց յարգ-
 չընծայող աշակերտ մը, կամ զուակին դաստիա-
 բակութեանը կարևորութիւն չտուող հայր մը՞
 մարդոց կարգէն դուրս տարբեր էակ մը կամ
 վայրենի մը կը համարուի :

ՍԱՀ. Քաւ լիցի որ սկզբունքս փոխած և դա-
 րուս պաշտած ճշմարտութեանց հակառակ ճամ-
 բայ բռնած լինիմ. բայց որովհետև սրտնեղու-
 թենէս յառաջ եկած քանի մը խօսքերով տեղիք
 տուի ձեզ ինձ դէմ այսպէս խօսելու, ներեցէք որ
 պատճառը ձեզ յայտնեմ : Ինչպէս որ գիտէք,
 ուսմանը կենօք չարի կը սիրեմ, և ստիպողական
 պատճառաւ մը դպրոցէն բացակայ գտնուած օրս
 կորուսած կը համարիմ, և անհնարին վիշտ մը
 կ'զգամ այն օրը իմ սիրած կեանքէս, մտաւոր
 սնունդէ զրկուելուս համար : Յաւ է ինձ յայտնել,
 բարեկամս, թէ հայրս քանի՞ քանի անգամ կա-
 րօտութենէ ստիպեալ ինձ պատուիրեց դպրոցէն
 դադրիլ, որպէս զի զիս արհեստի մը տայ, և
 սպառնացաւ զիս տուն չընդունիլ. բայց ես գիտ-
 նալով որ անձակ մտօք այն արհեստին մէջ ալ
 յառաջագիմութիւն չպիտի կրնամ ընել և խեղճ
 պիտի ըլլամ, հօրս պատուէրին դէմ ուսմունքէս
 չդադրեցայ : Սակայն տեսնելով որ իմ յառաջա-
 դիմութեանս խոչնդոտ կ'ըլլայ դասադրբերու,

մատենից , և լրագիրներու պակասութիւնը , կատա-
ղութենէս ինքզինքս կ'ուտեմ և աղքատութիւնը
կ'անիծեմ : Այս է պատճառը այս օրուան սրբո-
նեղութեանս , որ շատոնց իվեր ունէի , իբրև ուտիճ
մը սրտիս մէջ , և զսպելով աշխատութիւնս կը
շարունակէի . բայց այն սրտնեղութիւնս այսօր
զայրացած լինելով՝ սկզբունքիս հակառակ խօսքեր
ըսել տուաւ ինձ :

ՍՄԲ. Այդ վիշտը ես ալ ունիմ , թէև նուազ
քան զքոյդ . բայց մի՛ յուսահատիք , բարեկամս ,
մխիթարուեցէ՛ք յիշելով որ չէ թէ մեզի պէս
համբալիները , այլ հնութեան երևելի Փիլիսոփա-
ները , արդի մեծ մատենագիրները և երևելի
խմբագիրներն իսկ մեծաւ մասամբ աշխարհի սե-
մէն ներս մտած ատեն բազդին ժպիտը վայելած
չեն . բայց և այնպէս այդ դժբաղդները հատա-
տուն կամօք , յարատև աշխատութեամբ և իրենց
բնատուր հանճարովն մարդկային ազգին բարե-
բարներն եղած են , մութին մէջ խարխափող ժո-
ղովրդոց իմացական լոյս տալով , դիտութիւնները
մշակելով և արհեստները նոր դիւտերով ճո-
խացնելով :

ՍՍ.Ը. Ամենայն մարդիկ՝ ըստ օրում միւսնոյն
բնութեան զաւակը , հաւասար են , կ'ըսուի , բնու-
թեան առջև . արդ ոմանց աղքատ և ոմանց հա-
րուստ ծնանելը անհաւասարութիւն մը չէ՞ . և այս
անհաւասարութիւնը բնութեան Հեղինակին կող-

մէն զրկում մը չէ՞ չքաւորութեան մէջ ծնող
մարդոց . արդեօք Փիլիսոփայից ըսածը սխալ է
թէ բնութիւնը անիրաւ :

ՍՄԲ. Ոչ բնութիւնը անիրաւ է յայդմ մասին
և ոչ Փիլիսոփայք սխալ : Մարդիկ հաւասար են
ծննդեան և մահուան պայմաններու և մարդկային
արժանապատուութեան մէջ . բայց ֆիզիզական
և իմացական կարողութեան մէջ անհաւասար են .
մէկուն ֆիզիզական կազմութիւնը զօրեղ կը լինի ,
միւսինը տկար . մէկուն իմացողութիւնը հզօր կը
լինի , իսկ միւսինը անզօր . մէկն եռանդուն և
միւսը դանդաղ , մէկը գործունեայ , միւսը ապի-
կար , մէկը հաստատամիտ՝ իսկ միւսը յեղամիտ
կը լինին իրենց ունեցած բնական խառնուածոց և
ստացական յատկութեանց համեմատ . ուստի մար-
դոց հարստութեան և աղքատութեան պատճառ-
ները իրենք և դէպքերն են :

ՍՍ.Ը. Աւելի աղէկ չէ՞ր լինէր որ Աստուած՝
որ ամենակարող է , այդ բոլոր կարողութեանց և
յատկութեանց մէջ հաւասար լինելով զրկէր
զմարդիկ յաշխարհ , որպէս զի աղքատութիւններ
և անտեղութիւններ չպատահէին :

ՍՄԲ. Այդպիսի դիպուածի մը մէջ մարդիկ
իրարու և ոչ մէկ բանի մէջ կարօտ չլինելով՝
մարդկային ընկերութիւնը չէր կազմուեր . արհեստք
և գիտութիւնք չէին ծաղկեր . յառաջադիմու-
թիւն չէր լիներ , այլ ամեն բան իր նախնական

վիճակին մէջ կը մնար նոյնութեամբ . և չկայ բուրբ մը , արարած մը , շնչաւոր կամ անշունչ , որ իր ամբողջացուցիչ մասերուն մէջ նոյնութիւն ունեցած լինի բնականապէս : Աշխարհիս ամեն մասերն ինչո՞ւ ծով կամ ցամաք , կամ լեռան , կամ ձոր և կամ դաշտ չեն եղեր : Անոր համար որ նոյնութիւն եղած կը լինէր , և նոյնութեան մէջ իր ունեցած արդի ներդաշնակութիւնը չէր ունենար որ բնութեան օրէնքն է : Եթէ աշխարհի ամեն մասերը ծով լինէին , մարդիկ ո՞ւր պիտի բնակէին և մշակէին ինչ որ իրենց պէտքին կը վերաբերի . և եթէ բոլորովին ցամաք կամ ուրիշ մաս լինէին , երկրին անձրևի և ջուրի պէտքը ո՞ւր կէ պիտի լեցուէր : Պէտպէսութիւնը ամբողջութեան օրէնքն է , ոչ միայն անհատի մը վրայ այլ և տեսակին . ոչ մարդուս ամէն մէկ մասերը մի և նոյն են և ոչ մարդկային ընկերութիւնը կազմող անհատք մի և նոյն կազմն , գէմքը (թուէ) և կարողութիւնն ունին , այլ ինչպէս ֆիզիզականի՝ նոյնպէս իմացականի մէջ կ'աարբերին մարդիկ : Այս տարբերութենէն կը ծնի մէկ մէկու կարօտութիւնը , և կարօտութենէն ընկերութիւնը , Եթէ ամեն մարդիկ հարուստ լինէին , ոչ ծառայող կը դառնուէր , ոչ հնարաղիտութեան հետամուտ և ոչ գիտութեան մէջ իր կեանքը մաշող . և այն ատեն հարկ կ'ըլլար զմարդիկ և զբոլոր աշխարհ այլազգ գրօթեամբ և պայմաններով ստեղծել . բայց արդի

գրութեան տակ մարդկային ընկերութեան ներդաշնակութիւնը և յառաջադիմութիւնը մէկ մէկու կարօտութեան մէջ է :

ՍՍ.Ը. Բայց ես որ ուսմունք սովորիլ կ'ուզեմ և հարուստին ոսկին չունիմ , ի՞նչպէս կրնամ իմ ուսման պէտքերս հոգալ և անոր մէջ յառաջագիմել . ո՞չ ապաքէն ահագին արդելք մը պիտի ունենամ իմացական քայլերուս առջև . ինչպէս որ հիմայ ունիմ :

ՍՍԹ. Նախ՝ եթէ դու հարուստ լինէիր , թերևս հիմակուան շափ ուսման փափագ չունենայիր , ինչպէս շատերն ունին այդ միջոցը և քիչ բացառութեամբ քու փափագդ ունին . և երկրորդ՝ եթէ դու հարուստին ոսկիին պէտք ունիս , նա ալ քու լոյսիդ և ծառայութեանդ պէտք ունի : Եթէ Սրիստոտել իր աշակերտին , մեծին Աղեքսանդրի ոսկիներուն պէտք ունեցաւ , սա ալ նորա իմացական լոյսին պէտք ունեցաւ . « Հայրս ինձ կեանք տուաւ , բայց նա (Սրիստոտել) ինձ աղէկ ապրիլ սովորեցուց » ըսաւ Սղեքսանդր :

ՍՍ.Ը. Բայց հիմայ աշխարհիս ընթացքը փոխուեր է . հարուստները իրենց ոսկիին հետ ուսմունք ալ ունին , աղքատին լոյսին պէտք չ'ունին :

ՍՍԹ. Ատոնք բացառութիւն են , ասկէ զատ անոնք ուսմունք կը սովորին իրենց հարստութիւնը պահպանելու և աճեցնելու համար . իսկ մենք՝ արհեստից , գրականութեան զարգացման և աղ-

գային դաստիարակութեան ծաւալմանը ըստ կարի ծառայելու համար, այս տարբերութեամբ միայն որ մենք աւելի պիտի նեղուինք և աւելի քրտինք պիտի թափենք և ազգին յառաջադիմութեանը պիտի ծառայենք, որոյ ՚ի փոխարէն եթէ ոչ շատ մ' ոսկի' գոնէ պիտի կրնանք ունենալ ապրուստ մը, զոր եթէ գիտնանք տնտեսաբար վարել, գոհ կրնանք լինիլ :

ՍԱՀ. Որչափ որ յուսադրական են խօսքերդ, Պարոն Սմբատ, մեր գրագիտաց և վարժապետաց տխուր վիճակը տեսնող մը անհնար է որ անոնց վիճակին վախճակի և մտադիր իր ասպարէզին մէջ յառաջադիմելու նկրտի. զի ի՞նչ տարբերութիւն կայ այսօր սոսկ և աղէտ գործաւորի մը և իմացական ու բարոյական յառաջադիմութեան ծառայող ուսեալ և կիրթ անձի մը վարձատրութեան մէջ, և ինչո՞ւ համար անուսումն և ասիկար մարդիկ ուսեալ և գործունեայ մարդերէն աւելի շնորհ պիտի գանեն բազմութեան առջև :

ՍՄԲ. Վասն զի կշռոյն մէկ կողմը շատ բան դրուած է և միւս կողմը քիչ :

ՍԱՀ. Բացայայտ խօսեցէք :

ՍՄԲ. Աշխարհիս մէջ ամեն կուսակցութիւն իր կողմինը կը շահի կամ շահիլ կ'ուզէ, և հասկառակ կողմինը ընկճել կ'աշխատի : Այսպէս մութին բարեկամներն ալ, որք տակաւին թուով շատ են և հզօր մաս կը կազմեն, իրենց կողմինը

կը շահին աւելի քան հակառակ կողմինը : Այս անպատեհութիւնը իմացական լուսոյ բարոյական աշխարհին վրայ սփռել սկսած ժամանակ միայն կրնայ տեղի ունենալ : Որ պիտի գայ և քիչ ժամանակէն, երբ այդ լոյսը դէպի իր միջակէտը բարձրանայ և իր ճառագայթները ընկերային խորշերուն և ստորին աստիճաններուն վրայ զարնեն. յայնժամ իր թեթևութենէն օգին մէջ բարձրացած ընկերային կշռոյն թաթը պիտի սկսի ծանրակշռիլ և վար իջնել. այն ատեն յարգ պիտի ունենան մեր բարոյական գործաւորք և իրենց արժանի դիրքը պիտի բռնեն :

ՍԱՀ. Այդ բանը դարերու կարոտ է մեր ազգին համար. վասն զի մեր մէջ ո՛չ զբազեաները կը քաջալերուին, ո՛չ վարժապետները կը վարձատրուին. և ո՛չ ինձ պէս խեղճ աշակերտի մը օգնութեան ձեռք կարկառող մը կայ. հետևապէս զբազեա, վարժապետ և աշակերտ, ուր որ եմք, հոն պիտի մնամք. կրթութիւնն ու լոյսը յառաջ չպիտի երթան, կամ շատ յամր պիտի ընթանան և կշռոյն միւս թաթը ուչ պիտի ծանրանայ :

ՍՄԲ. Արդէն բոլոր յառաջադիմութիւնք, թէ նիւթական, թէ իմացական և թէ բարոյական, դարերու արդիւնքն են բոլոր լուսաւորեալ Եւրոպացի ազգաց մէջ և . . . :

ՍԱՀ. Ներեցէք ձեր խօսքը ընդմիջելուս, դիտողութիւն մ'ընել կուզեմ : Եւրոպացուց նիւ-

Թական և իմացական յառաջադիմութիւնը կ'ըն-
 դունիմ. բայց բարոյական յառաջադիմութիւնը
 չեմ ընդունիր. որովհետև վայրենի ազգերէն
 աւելի կը խռովեն անոնք թէ իրենց և թէ ընդհա-
 նուր աշխարհի խաղաղութիւնը, և անոնցմէ աւելի
 արիւնարբու կ'ըլլան խարդաւանանք մտածելով և
 քաղաքական խնդիրներ յարուցանելով (դու խնին
 ոււէ), որով խեղճ երիտասարդները, դու ըսէ,
 երկրին ծաղիկները անբան ոչխարի պէս յանուն
 հայրենեաց աղահուլութեան, բայց 'ի յադուրդ
 վրէժխնդրութեան և վառասիրութեան, 'ի սպանդ
 պատերազմի վարելով արիւնլուայ կ'ընեն այն դաշ-
 տերը, որք անոնց քրտինքովը պէտք էր ուսողութիւն
 յօգուտ անձանց և մարդկութեան, և այսպէս
 երկրագործութիւնը կը կաշկանդեն, հոյակապ քա-
 ղաքները կը ումբակոծեն, կը բռնաբարեն, կը լկեն
 կը յախշտակեն, կը կողոպտեն, կ'աւարեն և աշ-
 խարհի անբաւ մլաս կը պատճառեն: Այս է բա-
 րոյական յառաջդիմութեան արդիւնքը. հոս բա-
 րոյականութեան հօտն անդամ չկայ, ինչպէս
 ըսած է ազգային մը:

ՍՄԲ. Յաւալի ճշմարտութիւն մ'է այդ ըսած-
 նիդ. ես ալ այդ մասին ձեր գաղափարներէն եմ.
 մարդ աւելի բարոյական ըլլալու է, քան թէ սա-
 տանայի պէս դիտուն բայց անբարոյական. որով-
 հետև քրիստոնէական հաւատոց, կրթութեան,
 դիտութեանց և ուսմանց, մէկ խօսքով մարդկա-

յին յառաջադիմութեան նպատակը մարդուս
 կատարելութիւնն է, և առանց բարոյականի ոչ
 կատարելութիւն կայ և ոչ երջանկութիւն: « . . .
 ամէն դաստիարակութիւն որ կրօնական չէ,
 (այսինքն Աստուծոյ գոյութիւնը չքարոզեր), ան-
 կատար կ'ընէ զմարդն, և առ առաւելն խեղացի
 կենդանի մը կազմելու միայն կը յաջողի » 1: Պա-
 տիւ և իրաւունք պահպանելու համար, զըջական
 աստուածատուր դէնքին տեղ բարբարոս դարերէ
 մնացած սուրբ գործածել, վոխանակ իրաւաբա-
 նութեան պատգամի՝ աշխարհաւեր թնդանօթներ
 գողացնել և բանական էակներու կեանքը բառ-
 նալ, այն կեանքը զոր Աստուած տուած է և նա
 միայն իրաւունք ունի առնելու: Աօր աւետարա-
 նական բարոյականի պակասութենէն է, որ կը
 տեսնուի Եւրոպայի ազգաց վրայ իրենց այնչափ
 յառաջադիմութեանց մէջ, ի բաց առեալ մէկ
 երկուքը:

ՍՍ.Է. Ո՞վ պիտի լեցնէ այդ պակասը.

ՍՄԲ. Մայրերը միայն կրնան լեցնել զայն,
 Աւետարանի բարոյականին սերմունքը կանուխէն
 իրենց զաւակաց սրտին խորբերուն մէջ տնկելով և
 մայրենի խնամօք մշակելով, իբրև առաջին ուղղիչ
 այդ մատաղ տունկերուն, « . . . անոնց (մայրե-
 րուն) պաշտօնը ուսում մը չէ բնաւ, ազգեցու-

1. Իսէ-Մարթէն. Ընտ: Մայրե: Դաստի. Գիրք Ա.
 ԳԼ ԺԲ.

Թիւն մ' է . դիտութիւնը չէ անոնց տուածը , այլ ներչնչութիւնը և ուղղութիւնը » : 1

ՍՍ.Հ. Միթէ Եւրոպացւոց մէջ ալ կը պակօին այդ մայրերը :

ՍՄԲ. Ունին կամ չունին չգիտեմ , իմ և աշխարհի տեսածն այն է որ քաղաքակրթութեան յառաջապահն համարուող ազգաց գլուխները , կամ զանոնք ներկայացնողները դեռ կարող չեն եղած մէկմէկու դէմ խարդաւանանք չմտածելու և բանավարութեամբ իրաւախօհ լինելու : Ասկէ զատ ես՝ մայր բնելով բոլոր մայրերը կ'ուզեմ հասկնալ և ոչ թէ անոնցմէ մէկ քանին , կամ կիրթ դաստիարակուհիներ :

ՍՍ.Հ. Ամեն մայր կրթեալ ըլլայ , ամեն մայր մաքուր բարոյականի տէր ըլլայ , ի՞նչ երջանկութիւն աշխարհի համար . բայց այդ բանը կարծեմ անհնարին պիտի ըլլայ . քանի որ Եւային տկարութիւնը ժառանգ մնացած է իր սեռին սակայն միւս կողմէն ալ կը խորհիմ . հապա ո՞րկէ ելած են Յունաց մէջ Սօկրատներն ու Պլատոնները , Հայոց մէջ Գրիգորեանք , Ներսիսեանք և Վարդանանք . Ֆրանսացւոց մէջ Ս. Վէնսաններն ու Ֆէնէլոնները , և Ամերիկայի մէջ Ֆրանքլինները :

ՍՄԲ. Ատոնք ամենամեծ մասամբ իրենց դաստիարակէն ընդունած բարոյականի սկզբանց


1. Էմէ-Մարթէն , Ընտ. Մայրե. Դաստ. Գիրք Ա. Գլ. ԺԲ.

վրայ հիմնելով իրենց բարոյականը , և ինքզինքնին այս ուղղութեամբ դաստիարակելով առաքինացած են աւելի քան թէ իրենց մայրերուն տուած կրթութեամբը . բայց ասի կարողութիւն մ' է որ ամէն մարդու տրուած չէ . ինչպէս Աւետարանն ալ կ'ըսէ . « բազումք են կոչեցեալք և սակաւք են ընտրեալք » :

ՍՍ.Հ. Բայց միթէ չհետեւիր ատկէ թէ Աստուած բարոյականի տէր լինելու և առաքինանալու կարողութիւնը քիչերուն առանձնաչնորհած է և շատերուն զրացած :

ՍՄԲ. Աչ երբէք . միտքս չկրցայ հասկնել . մարդիկ թէպէտ և Ֆիզիգապէս և իմացականապէս իրարմէ առաւել կամ նուազ կարողութեամբ կը ծնանին , բայց բարոյականի համար այնպէս չէ : Ամեն մարդ պարտուց սկզբունքը սովորելն վերջը կարող է բարոյականի և առաքինութեան ասպարէզին մէջ ուղածին չափ յառաջ երթալ , միայն թէ իր կամքը դէպի այն կողմը հաստատած ըլլայ :

ՍՍ.Հ. Ետ լաւ . ահաւասիկ մարդ մը որ քիչ շատ բարոյականի տէր է , և բոլորով սրտիւ առաքինական գործեր ընելու կը ցանկայ , և տեսնելով որ նիւթական կարողութեան տէր մարդիկ Իմոտիս և յանմիտ զուարճութիւնս կը վատնեն իրենց դանձերը փոխանակ ազգային յառաջագիմութեան նուիրելով անմահանալու , որպէս Եահնազարեան և Նոսթրար , կը հալի կը մտչի . բայց




քնկերային կարգադրութիւնը կամ իր հօրը անգործունէութիւնն ու ապիկարութիւնը և կամ ձախորդութիւնը զինքը աղքատութեան մէջ դրած են . որով անկարող կը լինի իր փափագին , առաքինական դործեր ընելու համար . արդ՝ այս անձը որ իր աղքատութեան պատճառու մարդկային պատմութեան մէջ առաքինական գործերու յիշատակ չձգեց իր բարի վարքէն զատ , Աստուծոյ առջև առաքինի չպիտի սեպուի վերոյիշեալ անձանց պէս :

ՄԱԲ. Բարեկամ . մեր խնդիրն ո՞ւր էր ՚ի սկզբբան , և հիմայ ո՞ւր հանեցիր : **Ս. յԵ.** Խնդիրը տակաւին վէճի տակ է Փիլիսոփայից և Աստուածաբանից մէջ . բայց ես այդ մասին իմ գիտցածս ըսեմ : Աստուած գործէն յառաջ մարդու սիրտը կը քննէ , զի գործին աղբիւրը սիրտն է . « Մարդ բարի ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս » : Ուստի եթէ այդ մարդուն սրտին տրամադրութիւնը յանուն մարդկային պարտուց էր , և ոչ թէ յանուն և ՚ի ցոյց փառասիրութեան , չեմ կրնար ըսել թէ չպիտի ընդունի զայն երբև զնախյիշեալ առաքինիս . « Բայց փոքրիկն յԱրքայութեան երկնից մեծ է քան զՅովհաննէս Մկրտիչ » :

ՄԱ.Ճ. Ս. յԵ ըսած էր այնպէս կը հասկնամ թէ երկնից մէջ առաքինիներն հաւասար վարձք պիտի ընդունին :

ՄԱԲ. Չեմ կարծեր որ այդպէս լինի . քանզի



Աւետարանի քանքարներուն առակը « Ըստ գործոց իւրաքանչիւրոց » ի արդարութեան համեմատ վարձատրութիւն կ'ընէ զանոնք շահեցնող ծառաներուն . այսինքն շատ շահողին շատ և քիչին քիչ : Բայց ես կը փափաքիմ որ քիչ մ'ալ աղգայինի վրայ խօսինք :

ՄԱ.Ճ. Ս. յԵ փափագն ինձ օտար չէ . սակայն ես ինչպէս իմ վիճակիս նոյնպէս մեր աղջին վիճակին բարոքմանը վրայ յուսահատ եմ : Տանն և մէկ տարի է Սահմանադրութիւն մ'ունինք որ մէկ խօսքով , աղջին պարտիք և իրաւունք պիտի սովորեցնէր , աղքատներուն նեցուկը և հարստահարեալներուն պաշտպանութիւնը պիտի ըլլար : Ս. յն ալ մեր բաղդէն , Երեսփոխանական ժողովոյ վիճարանութեանց և ընդդիմամարտ կրից աղգեցութեան ներքև անդամալոյժ եղած չկրնար քալել : Փոխանակ գործ տեսնելու , որ մը սև է կ'ըսեն . որ մը ճերմակ , և չեն կրնար միաբանիլ ամենուն հաւանելի , գոյն մը գաննելու և անոր տալու համար :

ՄԱԲ. Ս. յԵ ու ամենայնիւ պէտք չէ յուսահատիլ , ոչ քու վիճակէդ և ոչ աղջին վիճակէն . ամեն գործ ՚ի սկզբան իր դժուարութիւններն ունի . թերևս իր վերջին երկունքն է Սահմանադրութեան կրածը :

ՄԱ.Ճ. Բայց կարծեմ , բանի մը երկունքը չափազանց երկարած առեն վտանգաւոր կ'ըլլայ անոր

առողջ ճնունդը : Ի՛նչ պէտք է երկար խօսքերով
 ժամանակ կորսնցնել և ազգին յոյսը խաբել .
 դործ տեսնելու է : Մէկ անձի ձեռօք կատարուած
 մեծամեծ և ազգաշէն դործոց շատ օրինակներ
 կան . բայց ես զանոնք թողլով մեր ազգային Վարչու-
 թեան քիչ շատ նմանութիւն ունեցող վարչա-
 կան ժողովներու երջանիկ արգելւնքներն յիշեմ :
 Ահա՛ քեզ Անդղիոյ և Ամբրիկայի Միացեալ
 նահանգաց կոմ՝ Կուսթէմալայի վարչական դոր-
 ծերը , որոց որոշումն ու գործադրութիւնը անոնց
 վարչական ժողովներէն յարդիւնս կը դան , մե-
 րինէն աւելի լուրջ քննութեան ենթարկուելով ,
 բայց առանց այսչափ ժամանակ կորսնցնելու :
 Միթէ մեր ազգային Վարչութեան ներկայացած
 խնդիրները յիշեալ ժողովներուն տեսած գործե-
 րէն աւելի ծանր են :

ՍՄԲ. Անշուշտ չէ . բայց ներեցէք ըսելու թէ
 մեր ժողովը այն ժողովներուն նմանցնելիք քիչ
 մը չափազանցութիւն է : Այն ազգաց ժողովականք՝
 անշուշտ աւելի լաւ սովորած են կարճ վիճաբանու-
 թեամբ աւելի ծանր գործեր տեսնելու դաղանիքն
 կամ որ նոյն է , կերպերը . բայց դժգաղ դարար
 մեր Կ. Պօլսոյ ազգային վարչական ժողովին մէջ
 գործ տեսնելը շատ դժուարին է . քաշկուտուք-
 ները շատ են : Հոն Սրբազան Նախագահին շուրջը
 Հայ Թիէրներ , Հայ Ժիւլֆալրներ , Հայ Կամ-
 պէթթաններ , Հայ Հիւկօներ , աջակողմեաններ և

ձախակողմեաններ կան . ասոնք օրերով պիտի
 ճառեն , ճառատեն , օրերով պիտի վիճաբանին ,
 վիճին և խժըժեն , խնդիրը տրամաբանութեան
 մաղէն անցընելէն յետոյ , ոսկերչի քուրայէն ալ
 պիտի անցընեն , փորձաքարը պիտի զարնեն , և
 այնուհետև եթէ մէջերնին փոթորիկ մը չ'ենէ ,
 պիտի գործադրեն :

ՍՍ.Ձ. Սպասէ՛ Ս.զգ , որ այդ վիճաբանու-
 թիւնքը վերջանան , և բարեդիպութեամբ փոթո-
 րիկ մը չելած խնդիրներն 'ի գործ դրուին : Բայց
 ժամանակս կը կորսուի , կ'ըսէ նա (ազգը) . ժա-
 մանակին հետ՝ որ անդառնալի է , ուրիշ ազգերն
 յառաջ կերթան և ես ետքը կը մնամ յերեսաց
 այդ անհամաձայնութեանց և քաշքշուքներու :

ՍՄԲ. Որո՞ւ փոյթ . բաւական է որ ամէն ժո-
 դովական իր ժամանակը կորուսած չլինի . իր խօս-
 քերը արձանագրութեանց մէջ դրոշմուած ըլլան .
 և ազագայ սերունդը զայն տեսնելով՝ ըսէ թէ ,
 այն ինչ մարդն ալ մեծ դեր խաղցած է ժողովին
 մէջ , Բայց ասոր դէմ պիտի ըսուի թէ կարծիք
 յայտնելու և դիտողութիւն ընելու համար հաջկ
 է խօսիլ և փաստերով հաստատել իր ըսածը , և
 այս ալ ժամանակի կարօտ է : Ապաքէն այդպէս
 է . բայց ամբողջ օրեր քաշքշուքներու զոհելով
 որոշումի և գործի ժամանակ չթողուն ալ անպա-
 տեհութեան միւս ծայրն է : Երկու անպիտան
 մարդիկ ընդդէմ իրաւանց ազգին և ընդդէմ

օրինաց Եկեղեցւոյ փորձ կը փորձեն Աթոռիկս սութիւն յախշտակելու սոսկալի ամբաստանութեանց տակ, և ազգը տարիներով կը խաղցնեն. ի՞նչ Աստուածային շնորհք, և արժանի կոչում եկեղեցական ղխաւորութեան . . . բայց ըստ իս աւելի ցաւալին այն է որ Ազգին ներկայացուցիչները անկարող կը գանուին այդ անպիտաններուն հետ արժանապէս վարուելու և դործին օրինաւոր վերջ մը տալու :

ՍՍ.Հ. Գուցէ դալիք Վարչութիւնը աւելի գործով ժամանակ անցնէ քան թէ խօսքով :

ՍՄԲ. Գուցէ, դուցէ, դուցէ և շատ մը դուցէ :

ՍՍ.Հ. Է՛հ, ի՛նչ ըսեմ, բարեկամս, մեր ազգին գործերն ու յառաջադիմութիւնը միշտ յոյսերու կապուած են : Մեր մէջ աւելի խօսելու և անտեղի մեկնութիւններ տալու սկզբունք կայ, քան թէ գործելու :

ՍՄԲ. Իրաւունք ունիք, մեր զիւղին մէջ ալ այնպէս չէ . Ամբողջ տարիին մէջ միայն երկու ամիս շերամով կ'զբաղին և տասն ամիս սրճարաններու մէջ ընդունայն խօսակցութիւններով և անմիտ խաղերով կ'անցնեն :

ՍՍ.Հ. Մարդս ընկերական լինելով՝ անշուշտ այնչիտի հասարակաց տեղեր զնալու է, մարդ տեսնելու, խօսակցելու, տխուր ժամերը փարատելու, լոյս տալու և լոյս առնելու համար :

ՍՄԲ. Ռւր է ընկերութիւն ըսածդ . որ բանի

մէջ է . առևտուրի՞ մէջ, երկրագործութեա՞ն մէջ, գաղափարի՞ մէջ, ազգային գործո՞ց մէջ, և ի՛նչ են հոս խօսուածները . ընկերակա՞ն, քաղաքակա՞ն, ազգայի՞ն . և ի՛նչ լոյս կը տան իրարու . փիլիսոփայակա՞ն, տնտեսակա՞ն, երկրագործակա՞ն, սկզբունքի՞ . միթէ մէկը իր չունեցածը կրնա՞յ տալ ուրիշին, ոչ երբէք : Թէև պարտպոյ կամ տխրութեան ժամերը անցնելու համար մարդս ընկերութեան կը կարօտի, և այդ ընկերութեան ամենէն յարմար տեղը ընթերցարանները կրնան լինիլ . բայց մենք սրճարանի ալ դէմ չենք իբրև սուրճ խմելու տեղ և զբօսատեղի . սակայն քանի որ իր նմաններուն հետ ռեստորաններու նպատակը միայն զբօսանք չէ, այլ ընդ նմին լոյս առնել և լոյս տալ է, ըստ որում միայն նիւթ չէ մարդը . հոգի, միտք ալ ունի, և ասոնք ալ իրենց անմարմին սնունդը ունին անշուշտ . պէտք է որ այդ սնունդն ալ առնէ ուր տեղ որ յարմար դատի . հոն լրագիր, պատմութիւն և ընտիր կամ նոր հեղինակութիւններ կարդալով, որպէս զի իր առ Ստուած, առ մարդն, առ Հայրենիս, առ ընտանիս և առ անձն ունեցած պարտքերը ուսանի և կատարէ, որպէս զի այս ընթացքով ներքին մարդն ալ իր իրաւունքէն չզրկուի, այլ իր աճումն ու կատարելութիւնն առնէ արտաքինին պէս :

ՍՍ.Հ. Ըստ իս աւելի ցաւալին այն է որ օրերնին առած մարդիկ « ալ մեզի համար չէ » ըսելով

ինչ անտարբերութիւն որ կը ցուցնեն լրագիր կարգալու և միտք մշակելու նկատմամբ, նոյն անտարբերութիւնը կը ցուցնեն և երիտասարդք : Այս վերջիններն աւելի դատապարտելի են, զի նոր դարու մարդ են և հին դարու մարդոց ընթացքը բռններ կ'երթան :

ՍՄԲ. Բայց պէտք է գիտնալ թէ մարդոյն միայն մարմնաւորը հոգալ և մտաւորին անփոյթ ըլլալ մարդը անկարող ընել ըսել է . միաքը զօրութեան ալ ձեռքն է, իսկ մարմինը ձախ . ուստի այդ ձեռքը արիտութեան շղթաներով պըկել, անսնունդ մեռցնել՝ մարդոյն բարօրութեան ազբիւրը դոյել ըսել է :

ՍՍ.Ն. Բայց եթէ մէկը այդպիսի սնունդի մը պէտքը չզգայ, կրնայ առնել :

ՍՄԲ. Մեղքը անոնց վիճը որ չեն զգացած :

ՍՍ.Ն. Ոմանք ալ ինքզինքնին արդարացնելու համար կը արանչեն ըսելով թէ, հայերէն գրքերն ու լրագիրները սուղ են, մարդ չկրնար մօտենալ առանց լեցուն քսակի :

ՍՄԲ. Ընկերութիւնն ամէն դժուարութիւն կրնայ դիւրացնել : Թող թանգարանի ընկերութիւն կազմեն, գիրք և լրագիր թող առնեն և պարապոյ ժամանակ մտքերնին մշակեն . աղքատ ուսումնականներն ի նչպէս կը մօտենան անոնց :

ՍՍ.Ն. Մօտեցողներուն համար կ'ըսեն թէ հաց չունին :

ՍՄԲ. Անոնց հաց չունենալուն միակ պատճառն ալ մտաւոր սնունդի պէտքը չզգացող և լրագրի չմօտեցողներն են :

ՍՍ.Ն. Ի՞նչպէս

ՍՄԲ. Կշռոյն թաթը միտքդ բեր :

ՍՍ.Ն. Յիշեցի . բայց ետ դառնալ չկամիմ . ըսէք ինչ որ պիտի ըսէք :

ՍՄԲ. Եթէ ամէն մարդ փոքր 'ի շատէ իրեն մտաւոր սննդեան պէտքն զգար, գիրք և լրագիր կարդայր, գնողաց թիւը կը շատնար, հրատարակութիւնք դիւրազնի կը լինէին, և դրագէտք վարձատրուելով կը քաջալերուէին . նոյնպէս եթէ զաւակաց դատտիրարակութեան պէտքն զգացուէր, վարժապետք ալ անվարձք չէին մնար . ուստի և ոչ առանց հացի :

ՍՍ.Ն. Երիտակը խօսելու համար, հիմայ ամէն տեղ դատտիրարակութեան պէտքն զգացողներուն թիւը շատնալ կ'սկսի :

ՍՄԲ. Հացի խնդիրը այդպէս շատ հրաշքներ պիտի դործէ խաւարասէրները լուսասէր ընելով :

ՍՍ.Ն. Ետտերն ալ ժամանակի մարդ երեւելու համար, դատտիրարակութեան պէտքը կը խոստովանին . բայց արժանաւոր վարձատրութեան սաստիկ կը հակառակին :

ՍՄԲ. Այդպիսիները կը նմանին այն այդիտերոյ որ կ'ուզէր իր այգին անմշակ չթողուլ . բայց դործաւորաց օրականը իր աչքին բարձր երևելով

իր ստակը կը խնայէր : Եւ ահա գտաւ գործաւոր մը որ այն աւուր հացը վաստկելու համար ստիպեալ էր գործի մը երթալու . խօսեցաւ անոր հետ . բայց կարօտութիւնը տեսնելով արժանաւոր օրական չտուաւ անոր . մեր գործաւորը սրտին խորէն հառաչանքով մռմռաց . բայց ինչպէս ըսինք՝ ստիպեալ լինելով՝ զնաց նոյն օրը այդիկն մէջ գործեց : Արդ՝ ձեզ հարցնեմ . այդետէրը այս գործին մէջ շահեցա՞ն :

ՍՍ.Ն. Ոչ :

ՍՄԲ. Ինչո՞ւ :

ՍՍ.Ն. Վասն զի գործաւորին հացի ստիպողական պէտքը տեսնելով՝ արժանաւոր օրականը չտուաւ անոր՝ իր խիղճը հանդարտեցնելով թէ բռնի չէր այս գործը : Արդ եթէ այդետէրը այսպէս իր խիղճը կրցաւ հանդարտեցնել, ո՞վ կրնայ պնդել թէ գործաւորն ալ իր քիչ մը նուազ աշխատելուն մէջ չկրնար իր խիղճը հանդարտեցնել, ըսելով թէ « Սյսօրուան աշխատութիւնս ընդունած վարձուցս համապատասխանելէն զատ քիչ մ'ալ աւելի է . ասկէ աւելի աշխատիլ զոհողութիւն է . և ես զոհողութեան կարողութիւն չունիմ, մանաւանդ որ կարօտութեանս պտտճառաւ օրականիս կրճատումը արդէն իմ զօրութիւնս ջլատած է » :

ՍՄԲ. Բայց բարեբաղդաբար մեր գործաւորը այդ խելքը չըրաւ, և ամենայն հաւատարմու-

թեամբ աշխատեցաւ նոյն օրը . արդ այդետերով ըրածը խօհեմութիւն կամ խնայութիւն է :

ՍՍ.Ն. Խօհեմութիւն չէ . որովհետեւ եթէ գործաւորը վարձքին ու աշխատութեան մէջ արտադրութիւն փնտռող մէկն ըլլար, այդետէրը վնաս պիտի ընէր . և եթէ այն գործաւորը չըրաւայդ բանը, ուրիշի մը չընելուն ո՞վ կրնայ երաշխաւորել . ուստի խնայութիւն ալ ըրած չըլլար, այլ զրկում՝ որ արդարութեան հակառակ լինելով՝ տնտեսագիտութեան մէջ տեղի չունի : Քեզ ի՞նչ փոյթ այն գործաւորին կարօտութիւնը . դու արդարութեան հրամանին և տնտեսագիտութեան օրէնքին հետեւէ . արդարութեան հրամանին հետեւէ՝ զրկում չընելու համար . տնտեսագիտութեան օրէնքին հետեւէ՝ գործաւորիդ զօրութիւնը չլլատելու և աւելի շահելու համար :

ՍՄԲ. Այդպէս ուրեմն, Պարոն Սահակ, մեր մտաւոր մշակներն ալ, որք Սզգին գրականութեան պարտեզը կը մշակեն և իմացական փոքրիկ տունկերը կը դարմանեն, կը սնուցանեն և կ'աճեցնեն, պէտք չէ որ իրենց բազուկներուն զօրութիւնը ջլատող և սրտին եռանդը մարող վարձքեր ընդունին . այլ քաջալերող և աշխոյժն աւելցնող վարձք . զի դժգոհ, կամ աւելի ճիշդը խօսելու համար, թշուառ փրճակը մարդուն հետ գործն ալ կ'սպաննէ : « Գործաւորք այնչափ աւելի մղում կ'ըտան արտադրութեան, որչափ լաւ վարձատրուին : Խօստ

Նուազ վարձքով ճարտարութիւններն (արուեստք) են յանդիմանելի արդիւնքն արտադրողները » : 1 Աւստի ձեր օրինակ բերած դործաւորին պէս , երբ գրադէտը ազգային , կրթական , տնտեսական և ուրիշ որ և իցէ կենսական խնդրոյ մը վրայ խորհելու կամ ճառելու ատեն պարտապէրին ուրուականն իր մտքին ներկայանայ . երբ վարժապետը ազգային ապագայ սերունդին միտքն ու սիրտը մշակած ատեն՝ հացի պակասութիւնը ճիւղաղի պէս վրան յարձակի , մէկուն զբիշը կը կապուի և միւսին լեզուն : Ահա՛ այն ատեն է որ դործն ալ մարդուն հետ կը նուազի և ազգային յառաջադիմութեան դործը քանի մը քայլ ետ կը մնայ : Ս,յս քանի մը քայլը պէտք չէ իմանալ վայրկեաններ , ժամեր և օրեր . այլ ամիսներ , տարիներ և թերեւ զարեր : Ա՛վ է այս յետադիմութեան պատճառը . — այն որ տնտեսագիտութեան հակառակ վարուեցաւ :

ՍԱ. Բայց խեղճ ուամիկը այդ խօսքին իմաստը լաւ չհասկնալով կ'ըսէ թէ՛ ինձ բաւական է նիւթական յառաջադիմութիւնը , կամ իրեն լեզուով հաց ունենալը . Ս.դգին մտաւոր յառաջադիմութիւնը պէտք է եղեր . ինձ և իմ զաւակիս ի՞նչ փոյթ , մենք մեր հացը նայինք :

ՍՄԲ. Ամէն ատեմ ցնա . ոչ ոք իբրև ազգի անդամ և իբրև մարդկային ընկեր չէ կարող անմասն ելնել ազգային կամ մարդկային յետա-

դիմութեան հետևանքներէն : Քու հացով երջանկութիւնդ այսօր է միայն . վաղը քու տգիտութիւնդ և ազգին յետադիմութիւնը՝ որուն անտարբերութեամբդ նպաստեցիր , քու թշուառութիւնդ ալ կը կանխեն . բայց պատճառը չգիտնալով պարզութեամբ « ալ հաց չունիմք , մենք ալ խեղճութեան մէջ ինկանք » կ'ըսես , և այդչափ միայն կ'զգաս : Բայց պէտք է գիտնաս որ Ս.դգը սեռային (ժէնէռիք) ընկերութիւն մ'է , զոր բաղկացնողները անհատական և առանձին կեանքէն ու դործողութենէն զատ ունին նաև ընկերական կեանք ու դործողութիւն , կամ մէկ խօսքով յարաբերութիւն : Գրագէտն իր երկասիրութիւնը , վարժապետն իր ուսմունքն ու գիտութիւնը , պաշտօնեայն իր ծառայութիւնը , երկրագործն իր բերքը , վտճառականն իր ապրանքը , արհեստաւորն իր ձեռագործը , հարուստն իր ոսկին և դործաւորն իր աշխատութիւնը չեն կարող մէկմէկու , և ազգային կամ մարդկային ընկերութեան չտալ , և ՚ի փոխարէն պէտք եղածը չստանալ . ուստի թէ անհատներու և թէ այդ ընկերութեան նիւթական կենաց ապահովութիւնը կախում ունի յիշեալ յարաբերութեան օր քան զօր աւելի բարւոք վիճակի մէջ գրուելէն : Ս,յս բարւոք վիճակին իմացական յառաջադիմութեամբ միայն կրնանք հասնիլ . զի իմացականութիւնն է որ հնարքներ և միջոցներ կը խորհի յառաջ եր-

թալու և կենաց գիւրուծիւն տալու համար : Տե՛ս , ուր որ իմացական լոյս չկայ , հոն միջոցները խեղճ , արտադրութիւնը խիստ նուազ և թշուառ է : Այս տեսութենէն կը հետևի թէ ազգային յառաջագիմութեան գործին անտարբեր գտնուիլ՝ ամէն անհատի համար նոյն իսկ իր վիճակին անտարբեր գտնուիլ է , որուն պատիժը եթէ ոչ հայրը՝ գոնէ զաւակն անշուշտ պիտի կրէ :

ՍՍ.Զ. Ռամիկներէն սմանք ալ կառարկեն թէ , եթէ ամէն մարդ ուսումնական ըլլայ , արհեստներն ու երկրագործութիւնն ո՞վ պիտի մշակէ :

ՍՄԲ. Եթէ այդպէս ընել ալ ուզենք , անհնարին է . զի մարդկային պէտքերը տարբեր և բազմադիմի լինելով , կարողութիւնք ալ տարբեր են . ոմանք ուսմանց յարմարութիւն ունին , իսկ ոմանք զանազան արհեստներու . ուստի ոչ ոք կրնայ պահանջել որ ամէն մարդ ուսումնական լինի . այլ կ'ըսենք թէ իւրաքանչիւր ոք պարտի նախ մշակել իր կարողութիւնը՝ ինչ բանի մէջ որ յարմարութիւն ունի . որպէս զի թէ իր վիճակը և թէ իր հեռուելու արհեստը նոյնութեան մէջ չմնան . այլ երկուքն ալ յառաջ երթան :

ՍՍ.Է. Ասոր դէմ ալ կ'ըսեն թէ մեր մէջ չկան արհեստի դպրոցներ՝ ուր աշակերտք կարենան իրենց հեռուելու արհեստին սկզբունքը սորվիլ :

ՍՄԲ. Այդ պական ալ միւսներուն պէս մեր երկրին Ժողովրդոց անուսումնութենէն և ընկե-

րութենէն և ընկերութեան սկզբունք չունենալէն յառաջ եկած է . եթէ հիմայ արհեստական դպրոցներ չունինք , մինչև որ ուսմունք և գիտութիւնք մեր երկրին մէջ ծաւալին , մինչև որ կենցաղագուս ընկերութիւններ կազմուին և արուեստական դպրոցներու պակասը ուրիշ բարձրագոյն դպրոցներու պակասին հետ լեցուի , պէտք է որ արուեստի դնալու աշակերտք գոնէ քիչ շատ ուսմունք առնեն նախ , և իրենց միտքը ըստ բաւականին մշակեն . զոր օրինակ թուաբանութիւն , երկրաչափութեան սկզբունք և քիչ շատ դժագրութիւն սովորին . որպէս զի իրենց առած լոյսին միջոցաւ կարենան յաջողակ լինել իրենց արհեստին մէջ քան զտոգէտ արհեստաւորը . վասն զի տարակոյս չկայ որ լուսաւորեալ արհեստաւոր մը աւելի կրնայ յառաջ երթալ իր արհեստին մէջ քան թէ անմշակ մտօք արհեստաւոր մը :

ՍՍ.Ը. Դա՛տ լաւ . Պարտիզակէն առնելով ուրիշ շատ տեղերու իմացականին նկատմամբ բաւական խօսեցանք , վերջացնենք այս մասը : Մեր խօսակցութեան կարգին մէջ քիչ մ'առաջ ամբաստանեցինք զՊարտիզակ ըսելով թէ « ամբողջ տարիին մէջ միայն երկու ամիս կ'զբաղին շերամի և տասն ամիս սրճանոցներուն մէջ ընդունայն խօսակցութիւններով և անմիտ խաղերով կանցնեն » : Այժմ քիչ մ'ալ տեղոյս նիւթականին վրայ խօսինք . և ամէն տեղացի ազգայինք , մա-

նաւանդ թէ զիւղացիք նոյնէն իրենց ինկած բաժինը թող առնեն , ինչպէս իմացականի մասէն առնելու են : Արդ , քանի որ տեղս դիւղ մ'ըլլալով ոչ մեծ առուտուր կրնայ լինիլ . և ոչ , ինչպէս կ'ըսուի , երկրագործութեան յարմար հող կայ , ի՛նչ կրնան ընել անոնք , որ անդրազ են , կամ գործ չունին :

ՄԲԲ. Իբրև գիւղ՝ իր մէջ եղած առուտուրը բաւական է . և ասկէ աւելին ժողովրդեան պէտքը կրնայ ներս մտցնել , երբ հարկ լինի . բայց երկրագործութեան գալով՝ յարմար հող չկայ ըսելը անմիտ խօսք է : Այս հողը պէտք եղածին չափ պարարտ է , և մշակութիւնն ու երկրագործական ուրիշ պայմաններն աւելի բարեբեր կրնան ընել դայն : Երբ երկրի մը մէջ մարդահասակ ցորեն կը լինի . այն երկրին հողը անբեր չէ . ուստի անգործ մարդիկ պէտք է որ երկիրը մշակեն , որպէս զի մէկ կողմէն թէ իրենց և թէ զիւղին բարիք մ'ըրած ըլլան , և միւս կողմէն ծուրութիւնն ու անոր ծնունդն եզրղ չարութիւնը նուազին :

ՄԱՀ. Բայց հոս դրամ և Եւրոպական գործիներ չլինելով այս տեղի երկրագործական կերպին տաժանելիութիւնը (բահով և բրիչով վարուցան ընել) կը խրատեցնէ զմարդիկ :

ՄԲԲ. Դրամ , գործիք և ուրիշ միջոցներ գիւրին է գոյացնել երկրագործական մէկ քանի ընկերութիւններ կազմելով . այնպիսի ընկերու-

թիւններ՝ որք նախ երկրագործական թեթև միջոցներով քանի մը տարի շարունակեն իրենց գործը , մինչև որ դրամագլուխները շատնան . որովք ամէն մէկ ընկերութիւն կարող ըլլայ երկրագործական մէյմէկ փոքրիկ մեքենաներ ունենալու :

ՄԱՀ. Հոս ընկերութեան օգի և սկզբունք մտած չլինելով՝ ամէն մարդ առանձին գործել և միայնակ հարստանալ կ'ուզէ . ընկերային գործողութեան մէջ ընաւ հաւատարմութիւն չկայ :

ՄԲԲ. Մ՛հ , բարեկամ , հիմայ աւրեցիր բանը . այդ անհաւատարմութիւնը թէ անհատներու և թէ ընկերութիւններու վարկին մասն է . և հետեւապէս անոնց յետագիւնութեան և անգործութեան մէկ պատճառը : Անհաւատարմութիւնը , մանաւանդ ժողովրդեան մը համար , բարոյական բորտութիւն մ'է , որ բարոյական կրթութեան և տնտեսադիտութեան ջրով միայն կրնայ սրբուիլ . բայց մինչև որ այդ դիտութիւնն ու կրթութիւնը դան , անգործութեամբ սպասելու է . — ո՛չ երբէք . զի առանց ընկերութեան աղքատ ժողովրդաց մէջ յառաջադիմութիւն չկրնար լինիլ . որովհետև մեծ և կենցաղօգուտ գործեր մեծ ուժի պէտք ունին , և այս ուժը հոս չգտնուելով՝ ընկերութիւնները միայն կրնան տալ : Ուստի ընկերութիւնը կազմել և անոր գործողութիւնները վարողներէն հաստատուն երաշխաւորութիւն առնելէն զատ՝ գործողութեանց վրայ սաստիկ հըս-

կողմիցն ընելու է հանդերձ ընկերային ուրիշ պայմաններով . ե՞րբ կամք եղած տեղը հնար պակասած է : Ս՛հ, ի՛նչ երջանկութիւն գիւղիս, երբ այդ ընկերութիւնք կազմուին և մեծնան և երբ տարեկան արմտեաց համար դուրս ելած երկու միլիոն զուրուշէն աւելի ստակը հոս մնալով ժողովրդեան մէջ շրջաբերի, ի՞նչ օգուտներ չեն կրնար ծնանիլ անկէ : Բայց այս մասին միայն Պարտիզակը չմեղադրենք . բոլոր Տաճկաստան մանաւանդ և Պօլիս մեղադրելի է . զի ի՞նչ երջանկութիւն Տաճկաստանի, երբ մեր հարուստ վաճառականք փոխանակ Եւրոպացւոց ապրանքներուն վաճառման միջնորդ լինելու, ինչպէս ըսած է նախիջեալ ազգային գրագէտը . այն ապրանքներուն կ'ըսեմ՝ որոց նիւթը մեր երկրէն դնացած է, և փոխանակ Տաճկաստանի ոսկիներն Եւրոպացւոց դիրկը թափելու, տեսակ տեսակ ընկերութիւններ կազմէին, բամպակեղէնի, մետաքսեղէնի և ասուեղէնի դործարաններ բանային, մեր երկրին բերքերը իրենք շահագործէին, անգործ մարդոց դործ տային, գաւառացիներն ալ երկրագործութեան կենդանութիւն տային, և ընապէս հարուստ երկրի մը մէջ աղքատութիւն չմտցնէին : Հացի առատ ազբիւր ունինք, բայց երկրագործութիւնը ամէն ուրեք չըսեմ, բարձի թողի, խեղճ վիճակի մէջ թողլով հացն ուրիշէն կը մուրանք . հանդերձի առատ նիւթեր

ուսինք . բայց դանոնք դործել չըխտելով կամ մանաւանդ թէ չուղելով՝ մեր զգեստն և ուրիշ ամէն պիտոյք ուրիշէն կը մուրանք ուրիշներն հարստացնելով . ի՞նչ այլանդակ տնտեսութիւն :

ՍՍ. Հ. Դուք տնտեսութեան արտադրական մասին մէջ մեղադրեցիք Տաճկաստանի հարուստները . ես ալ սպառման մէջ կը մեղադրեմ ազգային հարուստները, ՚ի բաց առեալ խիստ քիչերը . զի փոխանակ անմիտ զեղխութեանց, տղայական զուարճութեանց և աւելորդ ու անչնորհ պաճուճանաց համար իրենց ոսկիները կուրորէն շռայլելու, աւելի աղէկ չէր լիներ, որ դոնէ այն վառնուածներուն մէկ մասը ազգային դատտիարակութեան ծաւալմանը նուիրէին, և Սամուէլ — Մուրաաներու, Շահնազարներու և Առաքել — Նուպարներու անմահութիւնը անիրաւ մամոնայով վատկէին : Եթէ տնտեսագէտ մ'անոնց շռայլութեանց մանրամասն տուժար բռնելու ըլլայ, ս'ըջափ ահագին դուժարներ չպիտի կազմեն արդեօք : Ի՞նչ հասկցեր են այդ մարդիկ իրենց բռնած ճամբայէն, վայրկենական հեշտութենէ զատ՝ որ չեկած կերթայ . ե՞րբ այդպիսի մարդոց սկանջը պիտի մանէ, « Երթայք, դործեցէք, մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն որ մնայ ՚ի յաւիտեանս » :

ՍՍԲ. Բարեկամ, զիս դարձեալ տնտեսական և բարոյական խնդիրներու մի տանիր . » թոյլ տո՛ւր մեռելոցն թաղել զմեռեալ (գոյութիւնս)

իրեանց , Սինչև որ բարոյական և տնտեսական
 գիտութեանց սկզբունքը , կամ ուրիշ խօսքով ,
 մինչև որ պարտուց գիտութիւնը չուսանին , այդ
 սքանչելի խօսքին դորձնական կարևորութիւն չեն
 տար : Թափել իրենց սակինները հոն՝ ուր որ սնտոի
 ցոյցի և պաճուճեալ փառաց չոինդը կրնայ հըն-
 չել և իրենց ճոխութեան վրայ ամբոխին վար-
 մանքը դրաւել . ահաասիկ իրենց բոլոր բարքն
 ու երջանկութիւնը : « Ս, յն ամենքը որոց վրայ
 մարգիկ ակնկառոյց կընային և սքանչանալով մատ-
 նանիշ կը ցուցնեն մէկմէկու , դուրսէն միայն կը
 փայլին և ներսէն ողորմելի են » կըսէ Սաոյի-
 կեան մը : Ճշմարիտ փառքը անպաճոյճ , անշօինդ
 և առանց ցոյցի է , և պարտուց կատարման մէջ
 կը կայանայ : Բայց ի՞նչ է մարդկային պարտքը .
 երա՞զ է , եղջերուաքա՞ղ է այն անձին համար որ
 դեռ անոր այբուբէնը չգիտէ . և ի՞նչպէս գիտնայ ,
 քանի որ սովորելու կամք չունի : Ինչո՞ւ հեռուն
 երթալ . սովորիչ չուղղներուն մէկ օրինակն ալ այս
 բաղմահայ դիւզին մէջ չէ՞ : Բանի մը տարիէ 'ի վեր
 Ուսումնասիրաց անուն ընկերութիւն մը կայ հոս
 լրագիր կարդալու և թանգարան մը հաստատելու
 նպատակաւ . 1,000 տունէ բաղկացեալ Հայ դիւզի
 մը մէջ , այն ալ Կ. Պօլսոյ մօտ , միայն փոքրիկ
 ընկերութեամբ մը՝ միայն մէկ երկու աղջային
 լրագիրներ մտցնելու ամօթը մէկդի թողումք .
 քանի՞ անգամ ունի այդ ընկերութիւնը . ես կը

կարմրիմ բսելու , այս ալ մէկդի . երանի՛ թէ
 անոր սակաւաթիւ անդամները մնայուն լինէին .
 բայց այդ մխիթարութիւնն ալ հոս չկայ : Անգամ
 ներն ամէն տարի կը նորոգուին , բայց 'ի երկու
 երեքէն , մեծ մասը տարին կէս չեղած կը ցրուին ,
 և մնացողներուն մէջէն մէկը ամեն նոր տարւոյ
 սկիզբը Նիոզինէսի լապտերով նոր անգամ կը
 փնտռէ . — փնտռէ , եթէ բան գործ չունիս : Ս, յս
 սովորելէ փախչողներէն , եթէ հարուստ ալ լինէին ,
 ի՞նչ կրնար յուսացուիլ . — ոչինչ : Միթէ յղի
 ամպեր չունեցող մթնոլորտը անձրև կրնա՞յ տեղալ
 յերկիր . միթէ անմշակ և անսերմ արաք ցօրեն
 կրնա՞յ բերել . — ո՛չ երբէք :

« Սպառման վերաբերութեամբ երկու զօրու-
 թիւններ կը ներդործ են մարդուն վրայ . մին պէտ-
 քի ազգեցութիւնը կամ զուարճութեան հրապոյ-
 ըրն է , որ կը մղէ զայն սպառելու և ասոր համար
 աշխատելու . յառաջագիմութեան և քաղաքակրթ-
 թութեան մղիչ զօրութիւնն է այս , առանց որոյ
 մարդն բարբարոս վիճակի մէջ կը մնար . միւսը՝
 ողջմտութիւնը կամ բանասիրութիւնն է (խելա-
 ցութիւն , ֆերասէթ) , որ անոր կիրքերը կը
 սանձահարէ և բողձանքները կը չափաւորէ . այ-
 սինքն երկու բան կայ մարդուն վրայ . անասուն և
 միտք . անասունը իր մղիչ բնատենչերուն հետ ,
 և միտքը իր չափաւորիչ կարողութեանն հետ ,
 որում (մտքին) դաստիարակութիւնը , ընտանեաց

սէրը և փորձառութիւնը կը ներշնչեն խելացու-
թիւն , ողջմտութիւն և նախատեսութիւն 1 » :
Արդ այս պայմանները չեղած տեղէն ի՞նչ կրնայ
յուսացուիլ , բայց 'ի անստանիս' մտքին վրայ յաղ-
թանակ տանելէն . . . :

ՍՍ.Հ. Է՛՛հ . հասկըցայ որ այս խօսքերը քանի
յառաջ տանինք , ցաւերնիս պիտի աւելնայ . ես
անձնական ցաւոցս մխիթարութիւն կը խնդրէի ,
մեր խօսակցութեան մէջ ազդային պակասու-
թիւններու ծրարը բացուելով քիչ մնաց որ ազ-
դային մխիթարութիւնս ալ կորսնցնէի : Որոնք որ
ընկերութեանց օգուտները , ազդային և մարդ-
կային պարտուց դիտութիւնը և սնտեսութեան
սկզբունքները դեռ սովորելու պէտք ունին , թող
քիչ մ'ալ անոնք խորհին այդ կէտերուն վրայ .
մենք մեր թշուառութեան դարմանը նայինք :

ՍՄԲ. Մեր թշուառութեան դարմանը աշ-
խատութիւնն է միայն :

ՍՍ.Հ. Աշխատելու և յառաջադիմելու համար
ինձ միջոցներ կը պակսին և այս միջոցներու պակա-
սութիւնը , զոր արդէն ձեզ յայանեցի , մեծ ար-
դեւք է աշխատութեանս :

ՍՄԲ. Ես այդ միջոցները ձեզ փոխ կը տամ ,
և ուրիշ ընկերներս ալ 'ի նոյն կը յորդորեմ :

ՍՍ.Հ. Բայց կ'աղաչեմ ինձ անպատուութիւն
չըլլայ այդ օժանդակութեան մէջ :

1. Յովսէփ Կառնիէ . քաղ. անտես. գլ. 33 :

ՍՄԲ. Այս տեսակ անպատուութիւնը (եթէ
կրնայ այսպէս կոչուիլ օժանդակութիւն մը) հա-
զարապատիկ ընտրելի է քան վհատելով ուսմուն-
քէ դադարելը :

ՍՍ.Հ. Ենորհակալ եմ մեծապէս . զիս երախ-
տապարտ կ'ընէք ձեզ :

ՍՄԲ. Իմ պարտքս է այդ դոյլն ծառայու-
թիւնը , և կը ցաւիմ որ աւելի լիօրէն չեմ կրնար
կատարել զայն :


ՍՍ.Հ. Պարտքերնիդ չէ , այլ ձեր բարեւորու-
թիւնն ու ընկերասիրութիւնը :

ՍՄԲ. Ոչ ամենեւին , իմ ընկերային պարտքս
է , և ատոր վրայ ոչ ևս կ'ուզեմ խօսիլ . վերջա-
ցընենք , ահա՛ տղայքն եկան , և մենք տակաւին
կը խօսինք . շատաբանութիւն չէ՞ ըրածնիս :

ՎԵՐՔ

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.





U. 2.

№ 3405